

ՅԵՍԱԶԳԻԼ ԵՒ ՄԻԱՍԻՆ ՏՕՆԵԼ

Էջմիածինը շրջաբերական կարգադրութիւն է արել՝ Հայկական տպագրութեան 400-ամեակը և հայոց տառերի գիւտի 1500-ամեակը տօնել հոկտեմբերի 13-ին:

Այժմ հարց է առաջ եկել, պէտք է ամեն տեղ Էջմիածնի հետ միաժամանակ տօնել, թէ զանազան տեղեր զանազան ժամանակ. Եւ զանազան ժամանակ ասելով առ այժմ գոնէ՛ հաւկանում են մի ամիս տարբերութիւն—նոյեմբերին, ինչպէս որոշել է Թիֆլիզի Յանձնաժողովը:

Արդ, ինչ է լինելու օգուտը, եթէ կաթողիկոսը ետ վերցնի իր կարգադրութիւնը և մի ամսից յետոյ տօնենք, կամ թէ չէ տօնենք ջոկ-ջոկ. Ի՞նչ է կատարւելու էղ մի ամսւայ ընթացքում, եթէ էսքան ամիսների ընթացքում ոչինչ չի կատարւել. Ոչինչ, միանդամայն ոչինչ:

Յիրաւի, երբ զեռ ժամանակ կար, կարելի էր, որ բաղաքներն ու յանձնաժողովները յարաբերութեան մէջ մտնէին, կարծիքներ ու առաջարկութիւններ փոխանակէին, մի եզրակացութեան զային, ծրագիր մշակէին. բայց էղ չի արւած. Մի ժամանակ լինէր որոշած ընդհանուրի համաձայնութեամբ ու ընդհանուրի համար և մի նպատակ. այնուհետեւ ամեն տեղ կարող էին ունենալ և իրենց առանձին պայմաններն ու խնդիրները. Չի արւած էն, ինչ որ պէտք է անւէր, այսինքն միասին տօնել մի համազգային տօն, այժմ ուղում են անել էն, ինչ որ չպէտք է անել, անջատանջատ էստեղ էնտեղ զանազան ժամանակներ ջգրու հանգէսներ սարքել. Ապարդիւն ու տպեղ:

Միակ ելքն է յետաձգել մի վեց ամսով կամ մի տարով, էղ ժամանակի ընթացքում լուրջ պատրաստութիւն տեսնել և տօնը կատարել վայելուշ շքեղութեամբ ու իմաստուն կերպով ամեն տեղ միաժամանակ ու միասին: